ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/238

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն

Մասնակից՝ «Գոռ Շեկոյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝ Գոռ Շեկոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, քրեակատարողական ծառայողի շապիկ դատապարտյալների հանդերձանքի և անկողնային պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.09.2021թ.-ի թիվ 1/26-1/14790-2021 գրությամբ «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության 07.09.2021թ.-ի թիվ 32.1/28140-2021 գրության հիման վրա, 13.09.2021թ.-ին «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 13.09.2021թ.-ին:

14.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/216 համարի ծածկագիրը:

28.09.2021թ.-ին և 13.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 28.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.10.2021թ.-ին:

2. <u>ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը 07.09.2021թ.-ի թիվ 32.1/28140-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ԱՆ քրեակաարողական ծառայության կարիքների համար 2021թ. ընթացքում դատապարտյալի հանդերձանքի և անկողնային պարագաների ձեռքբերման նպատակով, էլեկտրոնային աճուրդի ձևով, հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ- 21/3» ծածկագրով գնման ընթացակարգ, որի գնահատման ընթացքում գնահատող հանձնաժողովը N 12 չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Գոռ Շեկոյան էդուարդի» Ա/Ձ-ին:

Նշված ծածկագրի N 12 չափաբաժնի մասով ընթացակարգի անգործության ժամկետն ավարտվել է 17.08.2021թ.-ին ժամը 00:00-ին: Հաղթող ճանաչված մասնակից՝ «Գոռ Շեկոյան էդուարդի» Ա/Ձ-ին պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք պայմանագրի նախագիծն, էլեկտրոնային համակարգի միջոցով, ուղարկվել է 17.08.2021թ.-ին՝ անգործության ժամկետի ավարտից անմիջապես հետո: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: 01.09.2021թ.-ին լրացել է «Գոռ Շեկոյան էդուարդի» Ա/Ձ-ի կողմից պայմանագիր կնքելու ժամկետն (10 աշխատանքային օրը), ուստի «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ՝ «Գոռ Շեկոյան էդուարդի» Ա/Ձ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի N 12 չափաբաժինը հայտարարվել է չկայացած' «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ սահմանված կարգով «Գոռ Շեկոյան էդուարդի» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 14.09.2021թ.-ին գրությամբ դիմել է «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.09.2021թ.-ի թիվ 1/26-1/14790-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված

նիստերին՝ ներկայացնելով բանավոր դիրքորոշում նախաձեռնված ընթացակարգի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ:

4. <u>ՍՑ-LO-2021/238 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից քրեակատարողական ծառայողի շապիկ դատապարտյալների հանդերձանք և անկողնային պարագաների ձեռքբերման նպատակով 26.07.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ն:

iii. «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ն թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 12-րդ չափաբաժնի մասով նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ն:

v. Հանձնաժողովի 06.08.2021թ.-ին նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 12-րդ չափաբաժնի մասով «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ի հայտը գնահատվել է բավարար:

vi. 06.08.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

vii. Հայտարարության համաձայն՝ գնման ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով ընտրած /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

viii. Հանձնաժողովի 06.09.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ էլեկտրոնային աճուրդի 12 չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ-ն: Ընթացակարգի անգործության ժամկետն ավարտվել է 17.08.2021թ.-ին ժամը 00:00-ին, ինչով պայմանվորված Մասնակցին Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք պայմանագրի նախագիծն, էլեկտրոնային համակարգի միջոցով, ուղարկվել է 17.08.2021թ.-ին՝ անգործության ժամկետի ավարտից անմիջապես հետո: 01.09.2021թ.-ին լրացել է «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ-ի կողմից պայմանագիր կնքելու ժամկետն, ուստի վերջինս զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, իսկ Ընթացակարգի 12 չափաբաժինը հայտարարվել է չկայացած:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.09.2021թ.-ի թիվ 1/26-1/14790-2021 գրությամբ «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա

ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից քրեակատարողական ծառայողի շապիկ դատապարտյալների հանդերձանք և անկողնային պարագաների ձեռքբերման նպատակով 26.07.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ 12-րդ չափաբաժնի մասով նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ն, իսկ թիվ 3 արձանագրությամբ վերջինիս հայտը հայտը գնահատվել է բավարար, ինչով պայմանավորված 06.08.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն՝ գնման ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով ընտրած /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր: Սակայն Հանձնաժողովի 06.09.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ էլեկտրոնային աճուրդի 12 չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչված «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ-ին Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք պայմանագրի նախագիծն, էլեկտրոնային համակարգի միջոցով, ուղարկվել է 17.08.2021թ.-ին՝ անգործության ժամկետի ավարտից անմիջապես հետո: 01.09.2021թ.-ին լրացել է «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ-ի կողմից պայմանագիր կնքելու ժամկետն, ինչով պայմանավորված վերջինս զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, իսկ Ընթացակարգի 12 չափաբաժինը հայտարարվել է չկայացած:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ն թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.09.2021թ.-ի թիվ 1/26-1/14790-2021 գրությամբ «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/238 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գոռ Շեկոյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**